«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
Գործադիր տնօրեն՝ Ա. Գևորգյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պատանիների առաջնության
երևանյան ընտրական փուլ

Կազմակերպիչ- Հայաստանի շախմատի ֆեդերացիա

Անցկացման վայր- Հայաստանի շախմատի ակադեմիա /հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 34/:

Ժամկետներ- 14-22 փետրվար 2025թ.

Ամսաթիվ	Խաղափուլ	Ժամ
14 փետրվարի	1-ին	15:00
15 փետրվարի	2-րդ	11:00
16 փետրվարի	3-րդ	11:00
17 փետրվարի	4-րդ	15:00
18 փետրվարի	5-րդ	15:00
19 փետրվարի	6-րդ	15:00
20 փետրվարի	7-րդ	15:00
21 փետրվարի	8-րդ	15:00
22 փետրվարի	9-րդ	11:00

Ժամակարգ- 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Մուտքավճար- 3000 ՀՀ դրամ

Մասնակիցներ՝

<u>Մինչև 8 տարեկան պատանիների մրցաշար</u>

Մասնակցելու իրավունք ունեն միայն 4-րդ և 3-րդ մարզական կարգ ունեցող այն շախմատիստները, ովքեր ծնվել են 2016թ. դեկտեմբերի 31-ից հետո:

2-րդ, 1-ին մարզական կարգ և վարկանիշ ունեցող շախմատիստները մասնակցում են հաջորդ փուլին:

1-ից 20-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2025թ. մինչև 8 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 10 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն միայն 3-րդ և 2-րդ մարզական կարգ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2014թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ին մարզական կարգ ունեցող շախմատիստները մասնակցում են հաջորդ փուլից:

1-ից 25-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2025թ. մինչև 10 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 12 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն միայն 2-րդ, 1-ին կարգ և մինչև 2025 ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2012թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 20-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2025թ. մինչև 12 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 14 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 1-ին կարգ և մինչև 2075 ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2010թ. դեկտեմբերի 31-ից հետո,

1-ից 18-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2025թ. մինչև 14 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 10 տարեկան աղջիկների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն միայն 4-րդ կարգային շախմատիստուհիները, ովքեր ծնվել են 2014թ. դեկտեմբերի 31-ից հետո :

1-ից 10-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստուհիները իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2025թ. մինչև 10 տարեկան աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 12 տարեկան աղջիկների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն միայն 3-րդ կարգային շախմատիստուհիները, ովքեր ծնվել են 2012թ. դեկտեմբերի 31-ից հետո :

1-ից 12-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստուհիները իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2025թ. մինչև 12 տարեկան աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Լրացուցիչ ցուցանիշներ՝

Հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը կորոշվեն՝

1. Հատված Բուհգոլցով
2. Բուհգոլցով
3. Անձնական հանդիպման արդյունքով
4. Սև գույնով խաղացած պարտիաների քանակով

Ընտրական բոլոր մրցաշարերում **արգելվում է** այն շախմատիստների մասնակցությունը, ովքեր որևէ տարիքային խմբում Հայաստանի առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության անհատական իրավունք ունեն:
Խաղից ուշանալու թույլատրելի ժամանակը սահմանվում է **30 րոպե**:
Մինչև 12 և 14 տարիքային խմբերում հաշվարկվելու է ազգային վարկանիշ:
Հայաստանի պատանիների առաջնության երևանյան ընտրական փուլի մասնակիցների հայտերը ներկայացնելու **վերջնաժամկետն է 2025թ. փետրվարի 11-ը՝ 18:00:**
Մարզադպրոցների հայտերը ուղարկել info@chessfed.am էլեկտրոնային հասցեին, ըստ կանոնադրությանը կից ձևաչափի:
Գրանցվել կարող եք նաև այցելելով Հայաստանի շախմատի ֆեդերացիայի պաշտոնական կայք, գրանցվել բաժին՝ հետևյալ հղմամբ https://www.chessfed.am/am:
Գրանցումը բանկային փոխանցման դեպքում կատարվում է հետևյալ հաշվեհամարին՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ
ՀՎՀՀ՝ 01515033
ԲԱՆԿ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»
Հ/Հ՝ 1510002020290100
Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարի անվանում, անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան տվյալներ, կարգը/վարկանիշ, հեռախոսահամար:
Հարցերի դեպքում զանգահարել՝ +374 99/10 440105